ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12, 1953 Общественные науки

Վ. Պարտիգուլի

ԱՌԵՂԾՎԱԾԻ ՎԵՐԱԾՎԱԾ ՄԻ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Գրականության պատմության մեջ քիչ են այնպիսի մեծ գրողները, որոնց կյանքի ու գործունեության բազմաթիվ հարցեր երկար ժամանակ մնային առեղծվածներ։ Այդպիսի գրողներից է հայ նոր գրականության հիմնադիր, լուսավորիչ-դեմոկրատ Խ. Աբովյանը։ Ընդամենը մի դար է մեզ բաժանում նրանից, սակայն նրա կենսագրության հետ կապված մի շարք հարցեր մնում են չլուծված։ Տակավին պարզված չեն Աբովյանի անհետացման հանգամանքները, վիճում են, թե ով է եղել նրա հայրը՝ Հարությո՞ւնը, թե՞ Ավետիքը, Դորպատում ի՞նչ ուսումնական հաստատության ուսանող է եղել, ե՞րբ է գրված «Վերք Հայաստանի» վեպը՝ 1840, թե՞ 1841 թվականին և այլն։ Տակավին չլուծված մի խնդիր է համարվել նաև «Վերք Հայաստանի» վեպի առաջաբանում հիշված Աղաֆոն Սմբատյանի անձնավորության հարցը.

«Մեկ երես բան դեռ չէի գրել,— ասում է Աբովյանը առաջաբանում,— որ իմ մանկական սիրելի բարեկամ և ազնիվ Հայազգի պարոն դոկտոր Աղաֆոն Սմբատյանը ներս մտավ։ Ուզում էի՝ թուղթս ծածկեմ, էլ չկարացի։ Ինձ համար Աստված էր նրան էն սհաթին ղրկել՝ նրա ջանին մեռնիմ։ Հոռ արեց՝ որ կարդամ, բարեկամիցը ի՞նչ պետք է թաքցրած։ Սիրտս դողում էր կարդալիս. մտքումս ասում էի՝ թե հենց հմիկ որդե որ ա, գլուխը կպտտի, ունքերը կկիտի մյուսների նման ու իմ ախմախության վրա մտքումն էլա հո կծիծաղի, որ երեսիս չասի։ Բայց փիսը ես էի, որ նրա ազնվական հոգին դեռ լավ չէի ճանաչել։ Վերջացնելիս՝ որ հենց էնա, թուրն էկել էր, ոսկորին դեմ առել, որ չասեց. «Թե էդպես կշարունակեք, շատ հիանալի բան կդառնա», ուզում էի վրա թռչիմ, բերանը, է՛ն քաղցր բերանը համբուրեմ։

Նրա սուրբ բարեկամության եմ պարտական, որ մունջ լեզուս բաց արեց»[1]։

Ո՞վ է եղել այդ «ազնվական հոգու» տեր Աղաֆոն Սմբատյանը, որ մյուսների պես «ունքերը» չի կիտել, չի ծաղրել Աբովյանի գրվածքները, այլ բացել է նրա մունջ լեզուն, նրա հետ կապված է եղել «սուրբ բարեկամությամբ» և որոշ իմաստով եղել է «Վերքի» առաջին գնահատողներից մեկը։

Հայ գրականության պատմության մեջ այդ հարցի մասին հայտնվել են տարբեր կարծիքներ։ Աբովյանագետներից ոմանք կասկածի տակ են առել Աղաֆոն Սմբատյանի իրական պատմական անձնավորություն լինելու հանգամանքը։ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ

---

[1] Խ. Աբովյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հատոր III, էջ 5։ Ընդգծումը բնագրում է։

Ա. Տերտերյանը գրել է. Աղաֆոն Սմբատյանը «չգիտես գրական տիպ է — շատերից մեկը, թե սոսկական, եղած անձն»[1]։

Աբովյանի մասին գրված ամենավերջին շրջանի («Դիվան»-ի երկու հատորների հրատարակությունից հետո) աշխատությունների մեջ ևս Աղաֆոն Սմբատյանի հարցը համարվել է չլուծված։ Այսպես, օրինակ, դոկտոր-պրոֆեսոր Հ. Ղանալանյանը գրում է. «տակավին չի պարզված այլ բարեկամ մարդկանց հետ նաև Աբովյանի մանկության սիրելի բարեկամ Աղաֆոն Սմբատյանի ով լինելը»[2]։

Աբովյանագետները արել են երկու ենթադրություն. 1) Աղաֆոն Սմբատյանը՝ անհայտ է գրական տի՞պ է, թե՞ իրական, «սոսկական» անձնավորություն։ 2) Աղաֆոն Սմբատյանն իրական-պատմական անձնավորություն է։ Առաջին ենթադրության հեղինակները հարցը համարել են փակված, չեն շարունակել պրպտումները։ Երկրորդ ենթադրության կողմնակիցները շարունակել են պրպտումներն ու ասել, թե Աղաֆոն Սմբատյանը և Աբովյանի՝ Ներսես Աշտարակեցուն գրած 1834 թ. նամակում հիշված Սմբատովը նույն անձնավորությունն է։ Ներսիսյան դպրոցի ավարտական քննությունների ժամանակ (որ, սովորաբար, տեղի են ունեցել հանդիսավոր պայմաններում, քաղաքացիական և պաշտոնական նշանավոր անձնավորությունների ներկայությամբ), Աբովյանի ավարտելու տարվա (1826 թ.) հանդեսին հրավիրվածների մեջ է եղել նաև Սմբատով ազգանունով մեկը, որը հիանալով Աբովյանի տված հաջող պատասխաններով, Ներսես Աշտարակեցուն ասել է. «Երբ լիցի տիրացու խաչատուրն եպիսկոպոս քաղաքին մերոյ»։ Աշտարակեցին պատասխանել է. «Այսօր կարէ լինիլ այդ, այլ զոր ուսանի, ի բազում ամս պարտ է աշխատիլ վասն»[3]։ Ենթադրել են ահա, թե այդ Սմբատովը կարող է լինել «Վերքի» առաջաբանում հիշված Աղաֆոն Սմբատյանը։

Հրատարակության պատրաստելով Աբովյանի՝ Ներսես Աշտարակեցուն գրած 1834 թ. հունիսի 10-ի նամակը (ուր ինքը՝ Աբովյանը պատմում է Ներսեսի և Սմբատովի միջև տեղի ունեցած վերոհիշյալ զրույցի մասին), Ե. Շահազիզը ծանոթագրել է. «Ո՞վ է այդ Սմբատովը, որը հիշվում է նամակում և ներկա է գտնվել Ներսիսյան դպրոցի հանդիսավոր քննության՝ կաթողիկոսի* ներկայությամբ։ Այդ հարցմունքին դժվար է մի որոշ պատասխան տալ, բայց կարելի է գուցե հավանական ենթադրությամբ ասել, որ դա այն Սմբատովը լինի, որ հիշված է «Վերքի» «առաջաբանում»[4]։ Տարօրինակն այն է, որ Շահազիզը դրանից հետո տարիներ շարունակ աշխատելով Աբովյանի «Դիվանի» II հատորի տեքստերը տպագրության պատրաստելու (որի մեջ զետեղված մի շարք փաստաթղթեր վերջնականապես պարզում են Աղաֆոն Սմբատյանի հարցը) և ծանոթագրելու վրա, 1948 թվականին պնդում է իր 1941 թվականի ենթադրությունը՝ քիչ ավելի հաստատ տոնով և հենց «Դիվանի» II հատորի ծանոթագրություններում. «Նամակիս մեջ (Աբովյանի 1834 թ. հունիսի 10-ի նամակը Ներսես Աշտարակեցուն.— Վ. Պ.) հիշված «Պարոն Սմբատովը»,— գրում է Շահազիզը,— գուցե այն դոկտոր Աղաֆոն Սմբատ-

[1] Ա. Տերտերյան, Աբովյանի ստեղծագործությունը, 1941, էջ 234։
[2] Հ. Ղանալանյան, Խաչատուր Աբովյան, 1948, էջ 24։
[3] «Դիվան Խ. Աբովյանի», հատոր II, էջ 17—18։
* Աշտարակեցին այդ ժամանակ արքեպիսկոպոս ու Վրաստանի հայկական թեմի առաջնորդն էր և ոչ կաթողիկոս։ Նա կաթողիկոս ընտրվեց 1843 թվականին։
[4] «Սովետական գրականություն», 1941, № 11։

յանը լինի, որին Աբովյանը հիշում է իր «Վերք»-ի «Հառաջաբանում»... Դա, այդ Սմբատյանը, Թիֆլիսի հայ հասարակության պատվավոր անդամներից մեկը լինելով, հավանորեն նույնպես հրավիրված է եղել Ներսիսյան դպրոցի հանդիսավոր քննության»[1]։

Շահազիզի այս ենթադրությունը կրկնված է Աբովյանի Երկերի լիակատար ժողովածուի երրորդ հատորի ծանոթագրություններում։ Ըստ որում, մի անգամ իբրև ենթադրություն,* մի այլ անգամ, նույն էջում, իբրև ճշգրտված փաստ. «Սմբատյան Աղաֆոն (դոկտոր Աղաֆոն Սմբատյան) — Թիֆլիսի այն ժամանակվա հայերից մեկը։ Նույն ազգանվան հիշատակությունը («Սմբատով» ձևով) պատահում ենք Ներսես Աշտարակեցուն Աբովյանի գրած մի նամակի սևագրում»։

Սխալ է այս ենթադրությունը. նամակում հիշված Սմբատովը չէր կարող Աղաֆոն Սմբատյանը լինել։ Քննության միջոցին Աբովյանը եղել է դպրոցական հասակի երիտասարդ, իսկ հիշյալ Սմբատովը՝ Թիֆլիսի շատ նշանավոր անձնավորություններից, որ կարողացել է իր կարծիքը ազատ, համարձակ հայտնել Ն. Աշտարակեցուն։ Այդ Սմբատովը չէր կարող Աբովյանի «մանկական սիրելի բարեկամը» լինել, Աբովյանի հետ այդքան տնավարի վերաբերմունք ունենալ (Աբովյանի տուն գնալ, «զոռ անել», որ նա իր գրածը կարդա և այլն)։ Նամակում հիշված Սմբատովը հայկական նահանգի նահանգապետ, գնդապետ Սմբատովն է եղել (Գևորգ Սմբատյան)։

Արդ, ուրեմն ո՞վ է եղել դոկտոր Աղաֆոն Սմբատյանը։ Մեր պրպտումները մեզ համոզեցին, որ անհրաժեշտ ուշադրության պակասի հետևանքով այդ հարցով հետաքրքրվող աբովյանագետները որոնումներ են կատարել հեռուները, ուշադրություն չդարձնելով ամենահավաստի և մոտիկ փաստերի վրա։ Մենք, նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Վերքի» գրեթե բոլոր պերսոնաժները եղել են իրական անձնավորություններ, որոշեցինք Աղաֆոն Սմբատյանին որոնել Աբովյանի ժամանակակիցների մեջ։ Եվ ահա փաստերը։

1. Աբովյանի արխիվում պահվում է Աղաջան Վարդանյանի՝ 1828 թվականի ապրիլի 20-ի նամակը Աբովյանին, ուր ի միջի այլոց գրված է. «Սրտակից եղբարքն Աղաբեկն և Սոլոմոնն սիրով մեծաւ ընկալան զսիրալիր ողջոյն ձեր և փոխադարձորեն ըղձակաթ սիրով զնոյն ընծայեն բաղձալուդ»[2]։ Սոլոմոնը, մեր կարծիքով, Աբովյանի ընկեր Սողոմոն Ավթանդիլյանն է։ Անդրադառնանք «Աղաբեկին»։ Այս նամակից պարզվում է նախ՝ որ Աղաբեկը եղել է ինչպես Ա. Վարդանյանի, այնպես էլ Աբովյանի ընկերը՝ «սրտակից եղբայրը» և երկրորդ՝ որ Աբովյանը մինչև այդ նամակը, Ա. Վարդանյանին նամակ է գրած եղել և «ողջույն» ուղարկել Աղաբեկին։

2. Առաքել Արարատյանի՝ Աբովյանին գրած 1829 թ. դեկտեմբերի 14-ի նամակից[3] պարզվում է, որ այդ ժամանակ Մոսկվայում սովորել է Արարատյանի ընկեր («Սիրելի իմոյ») Աղաբեկ անունով մեկը։ Վերջինիս նամակի (Արարատյանին գրած) բովանդակությունն Արարատյանը հաղորդում է Աբով-

---

[1] «Դիվան Խ. Աբովյանի», հատոր II, էջ 26։

* «Անհավանական չէ, որ «Հառաջաբան»-ում հիշատակված «Դոկտոր Աղաֆոն Սմբատյանը... Նամակում (Աբովյանի՝ Ներսեսին գրած 1834 թ. հունիսի 10-ի նամակում—Վ. Գ.) հիշված Սմբատովն է» (էջ 400)։

[2] Աբովյանի ֆոնդ, գործ № 352։

[3] «Դիվան Խ. Աբովյանի», հատոր II, էջ 75—76։

յանին նամակի տեր և բաղատարութիւններ չտայր, թե ո՞վ է Ադարեկը, գոյդ են տալիս, որ Արովյանը ևս ճանաչել է հիշյալ Ադարեկին։

3. 1830 թ. հոկտեմբերի 5-ին Ադարեկ Սմբատյանը ստորագրությամբ մեկը Մոսկվայից նամակ է գրել Արովյանին, որտեղ, ի միջի այլոց, կան նաև այսպիսի տողեր. «Միրելի Խաչատուր, լսել եմ սպասելով թղթոյ քում, յայսչափ միջոցի դարմանամ, թէ դիա՞ ոչ ծուլացար զէթ գոյդն բանիւք հանել դիա ի տարակուսանաց և արդ ապաժոյժ խնդրեմ, դի կանխեսցես գրել զկացութեանէ քումմէ, նաև պատասխանեսցես մեր Առաքեալ սիրելոյնս»։

4. Արարատյանի՝ Արովյանին գրած 1851 թ. հուլիսի 12-ի նամակում ասված է. «ԶԱդաֆոնն Սմբատեանց ի տախտակէ բարեկամութեան մի՝ քերեցէ»։

5. «Դիվանում» հրապարակված է նաև Ա. Սմբատյանցի ստորագրությամբ մի նամակ՝ ուղղված «Միրելի բարեկամս Խաչատուր Արովյանին։ Ահա այդ նամակը.

«Ի չարաչար խոչտանգանս բիւրատար թախծանաց վերջացեալ ի սպառ ի գլուխանաց բարեկամաց և ազգականաց բնչ ժամանակս ժամանակս զդամ պատուհասակոյ հարուածս ժանտին փորտուանատայ և անգէն երջերուտքագր խոչական ընարիլ. օրինակ իմն որպէս գահիճք արիւնռուչք հաշումաչ առնեն զսիրտ պանդիտականի։ Խոգալիկ եմ ես անհամար ձախորդութեանց աչխարհիս. ուստի և կնճիռ տրամութեան իրրև զրոյմ բաստի անոգոքելոյ ակոսեալս վարդեցիցեալ ի ճակատ իմ մատաթարատատ։ Ա՞խ, սիրելի, իգուր են այս երաչխիկք — չիր անգորր (ի) հոգւոյ իմում... Մխիթարեա՛ զիս, ազաչեմ. քոյդ բնկերաւոր բանիւք, յիշեցո՛ Ռոյս բղլաղբութեամբ զանցելոց ամաց նոանեղալին սիրոյ սրնչ գաղ անմոռանալոյ. գրեա՛ դամենայն հանգամանաց քոց. թէ դիա՞ ոչ կեաս, յաստաղէ՞մ ես. սիրելի՞ ես Պարրոտի և այլն, և այլն։ Նաև թէ զիա՞ոչ է. Եղանակ ուսման տեղւոյն ստուգեցուս և մասին բնչկանաբանեան. նա դի ես գոն գործեմ քաչ վարժիլ ի լեզու գերմանացի և յետ ինչ ժամանակի ուրիմ փութալ ատ Ձեզ. բայց մինչ դայն կեա դանկալի՝ հանապազորդեսցես ի փոխադարձ սիրագուն նամակագրութիւնս։

Սիրելին մեր Առաքեալ ասել բնչ ես զգրութիւն և գարմանալ բնչ կամակոր բուսիկնդ. թէ դի՞նչ իրէ պատճառ այնր, յանդիպես կամ Լուսոյ զդայտանելոյ պ. Նազարովի ի կողմանս յայդոսիկ և դաւերայ յոյժ յոյժ. դի չեղի ինձ դէպ տեսանել զդա ի Մոսկով. դաւիմ կրկնապատիկ, բայց սակայն խնդրեմ ի դիմաց իմոց շնորհաւորել զարտեայ ձեռներէդութիւնն, որ երեր հասոյց զդա ոգջամբ ի յիրջանիկն Դերպտ. կարտամ և ես աւարն ուտեսեալ արժանանալ, որում դաւք արժանացար, բան անհնարին բազմանալ ձերոց։ Ո՛զջ լերուք և մի՝ հեղգայք յանձախել ի գրութիւն։

Ամենախոնարհ ծառայ Ա. Սմբատեանց»։

Հոկտ.
18 32
ի
Մոսկով

Պարզվում է, որ այս Ա. Սմբատյանցը սովորել է Թիֆլիսում և եղել է Արովյանի, Նազարյանի, Արարատյանի ընկերը։ Թիֆլիսում գրագրի ավար-

[1] «Դիվան Մ. Արովյանի», հատոր II, էջ 84։
[2] Նույն տեղում, էջ 101։
[3] Նույն տեղում, էջ 193—194։ Ընդգծումները մերն են — Վ. Պ.։

տեղից հետո նա գնացել է Մոսկվա սովորելու՝ այցատերից շարունակելով նա. մանկավարժական կուրս պաշտպանել իր ընկերների, այդ թվում և Դորպատում սովորող Աբովյանի հետ։ Ինչպես երևում է, նա ցանկացել է սովորել Դորպատի համալսարանում, որտ համար էլ հետաքրքրվել է, թե «դիտա՞րդ է երանակ ուս-ման տեղերից ստուգելու ի մասին բժշկականությանս։

Այս նույն նամակից պարզվում է նաև, որ Ամբրատյանը վճարել է, որ նաղարքյանը Դորպատ սովորելու մեկնելիս եղել է Մոսկվայում և ինքը չի կա-րողացել տեսնել նրան։ Նույն բանը հաստատվում է նաև մի այլ վկայու-թյամբ։ 1833 թ. սեպտեմբերի 18-ին Աղաշյան Վարդանյանը Քիշինևից գրում է Աբովյանին. «գարձ իմ ի Ներսեսեան յանցեալ ամի ի Մոսկով յամսեանն հոկտեմբերի լուալ ի վաղաժամանեմ սրտակից բարեկամէ Աղաֆոն Ամբրատենց, թէ Ստեփան Նազարյանցն եկն աստ և գնաց ի Դերպտ. ցավեցայ ընդ ոչ տեսանելոյն իմ զնա»[1]։

Այսպիսով, հետաքրքրական է մեզ հետաքրքրող հարցը։ «Վերքի» ստացումից հիշված գրկաար Աղաֆոն Ամբրատյանը, ինչպես տեսանք, կապ ուներ Աբովյանի՝ Ներսեսին գրած նամակում հիշված Ամբրատովի հետ։ Աղա-ֆոն Ամբրատյանը, Աբովյանի ընկերը, ինչպես նշել ենք, չէր կարող այդ ժամա-նակ իրեն նշանավոր անձն հրավիրված լինել Ներսեսյան դպրոցի ավարտական քննություններին և մանավանդ Ներսես Աշտարակեցու հետ արձակ համարձակ խոսել Աբովյանի մասին։ Մյուս կողմից՝ նա հանդգնաբար Ամբրատովն էլ չէր կարող Աբովյանի «անհնարին սիրելի բարեկամը» լինել։ Աղաշյան Վարդա-նյանի 1828 թ. ապրիլի 20-ի նամակում հիշված «սրտակից եղբայր» Աղաբեկը, Առաքել Արարատյանի 1829 թվականի դեկտեմբերի 14-ի նամակի Աղաբեկը, 1830 թ. հոկտեմբերի 5-ին Աբովյանին նամակ գրող Աղաբեկ Ամ-բրատյանը, Արարատյանի 1831 թ. հուլիսի 12-ի նամակում հիշված «Աղա-ֆոն Ամբրատյանցը», 1832 թ. հոկտեմբերի 5-ին «Միրելի բարեկամս Աբովյա-նին նամակ գրող Ա. Ամբրատյանը և Աղաշյան Վարդանյանի 1833 թ. սեպտեմ-բերի 18-ի նամակի Աղաֆոն Ամբրատյանը նույն անձնավորությունն է՝ Աբով-յանի ընկեր (Թիֆլիսից) Աղաֆոն Ամբրատյանը, որը գրվել է Աղաբեկ, Աղա-ֆոն, հետագայում, ինչպես կտեսնենք, նաև Աղաթոն Ամբրատյանց կամ Ամ-բրատյան։ Պարզվում է, որ այս Ամբրատյանը 1830 թվականից եղել է Մոսկ-վայում։ Տարիներ հետո նա վերադարձել է Կովկաս և աշխատել զանազան պաշտոններում։ «Վերքը» գրելու ժամանակ Աբովյանը նրան, ինչպես, կարող էր կոչել «անհնարին սիրելի բարեկամս»։

Այժմ մի այլ հարց։ Ինչո՞ւ Աղաֆոն Ամբրատյանի «ով լինելու» խնդիրը հա-րուցվել է միայն սովետական աբովյանագիտության կողմից, այն էլ վերջին տասնամյակում (1941 թվականից)։ Այս հարցը, մեր կարծիքով, մի պատասխան ունի — նախասովետական աբովյանագիտությունն այդպիսի հարց չի արծար-ծել, որովհետև ինքը՝ հարցը գոյություն չի ունեցել։ Ինչպես կարող էին, ասենք 1860-ական թվականներին չնել, թե ո՞վ է եղել Աղաֆոն Ամբրատյանը, երբ նա, այդ նույն անուն ազգանունով, աշխատում էր իբրև բժիշկ կամ էլ ուսուց-չություն էր անում Շուշիում։ Այդ է պատճառը, որ Աբովյանի մասին գրող առաջին հեղինակներից մեկը՝ Ստ. Ոսկանը «Խաչատուր Աբովյան» հոդվածում

[1] «Դիվան Խ. Աբովյանի», հատոր II, էջ 180։

ուղղակի գրում է. «Ուսումնական բարեկամի մը հավանությունը զինքը կքաջալերե և «Վերք Հայաստանին» կշարունակվի»[1]։

Տասնամյակներ շարունակ Աղաֆոն Սմբատյանի անձնավորության «ով լինելու» մասին խոսք չի եղել, ինչպես ասենք խոսք չի եղել «Վերք»-ում հիշված մի քանի ուրիշ իրական պատմական անձնավորությունների մասին, իսկ երբ պետք է եղել խոսել Աղաֆոնի մասին, ապա հանգիստ, առանց նոր բան ասողի անհանգստության նշել են փաստերը։ Այսպես, օրինակ, 1913 թվականին, երբ նշվեց Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի 75-ամյակը, հոբելյանին նվիրված գրքում ուսուցիչների նույնիսկ ոչ լիակատար ցուցակում հիշված է նաև Աղաթոն Սմբատյանը[2]։ Դրանից մի տարի հետո Լեոն «Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի» գրքում մանրամասն պատմում է, որ 1863 թվականի հոկտեմբերի 1-ից, երբ հոգևոր ճեմարանի* տեսուչ է դառնում Պետրոս Շանշյանը, հրավիրվում են նոր ուսուցիչներ, որոնց թվում և Պերճ Պռոշյանը, Գարեգին Մուրադյանը, Աղաթոն Սմբատյանը (էջ 288)։

Այնուհետև ուսուցիչների, դասաժամերի և դասագների մասին խոսելով, Լեոն գրում է. «Ուսուցիչ դաղդիերեն լեզվի յ1-ին և 2-րդ դասատունս և ռուսաց լեզվի յ1-ին դասատուն՝ Աղաթոն Սմբատյանց վասն տասն ու մի դասուց 350 ր» (էջ 289)։

Շուտով Շուշվա այդ դպրոցում սկսվում է խիստ պայքար նախկին ուսուցչակազմի և Շանշյանի ու նրա հրավիրած մանկավարժական առաջավոր մեթոդներով աշխատող ուսուցիչների միջև**։ Այդ պայքարում, էջմիածնի հովանավորությամբ, հաղթում են հնի կողմնակիցները և 1865 թվականի հունվարին Շանշյանն իր հրավիրած ուսուցիչների հետ (մեկի բացառությամբ) թողնում են դպրոցը։ Դրանց մեջ է լինում նաև Աղաթոն Սմբատյանը (էջ 337)։

Ուրիշ փաստեր նույնպես կարելի է բերել, բայց, կարծում ենք, բավական է։

Նկատի ունենալով, որ Աղաֆոն Սմբատյանի անձնավորության հարցը նույնիսկ Աբովյանի կյանքին ու ստեղծագործությանը լավատեղյակ մարդկանց համար դարձել է առեղծվածի նման մի բան, ընկ. Աս. Մնացականյանը՝ «Դիվան Խ. Աբովյանի» գրախոսության մեջ («Տեղեկագիր», 1949 թ., № 7) խոսելով զանազան խնդիրների մասին, մի էջ էլ նվիրել է այդ հարցին։ Ընկ. Մնացականյանը, նշելով մեր բերած փաստերից չորսը (Արարատյանի 1831 թ. հուլիսի 12-ի ու Ա. Վարդանյանի 1833 թ. սեպտեմբերի 18-ի նամակներն Աբովյանին և Ա. Սմբատյանցի երկու նամակները), եկել է այն ճիշտ եզրակացության, որ «Վերքի» առաջաբանի և այս նամակներում հիշված Աղաֆոն կամ Աղաբեկ Սմբատյանը նույն անձնավորությունն է։ Նկատի ունենալով սակայն, այն հանգամանքը, որ ա) ընկ. Մնացականյանի հոդվածի մի երկու պնդումներին մենք համաձայն չենք, բ) մեր ձեռքի տակ եղած փաստերի մեծ մասը նա չի օգտագործել և գ) մենք այդ կապակցությամբ արծարծում ենք

---

1 «Արևմուտք», 1859, № 7։

2 «Ղարաբաղի հայոց թեմական դպրանոցի 75-ամյակը», էջ 22։

* Դպրոցը մինչև այդ կոչվել է հոգևոր ճեմարան, Շանշյանի տեսչության ժամանակ՝ Եղիշյան ազգային հոգևոր դպրոց, հետո՝ Սեմինարիա, ավելի ուշ՝ հոգևոր դպրոց։

** Այդ պայքարի արտացոլմանն են նվիրված Մուրացանի «Խորհրդավոր միանձնուհի» վեպի մի քանի գլուխները։

նաև այլ խնդիրներ (հարցի առաջացման պատմությունը, Աբովյանի՝ ժամանակից շուտ ծնված ու «միայնակ» լինելու տեսակետի քննադատությունը և այլն), որոշեցինք հանդես դալ այս հոդվածով։

Աղաֆոն Սմբատյանը Աբովյանի համար եղել է այն մոտիկ ու հարազատ մարդկանցից մեկը, որ խրախուսել է նրա գործը։ «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուի առաջաբանում Աբովյանն այսպիսի մի խոստովանություն է անում. «Շատ բաներ էսպես գրել, հազիր էի արել աշխարհաբար, բայց էլի սիրտ չէի անում, որ լիս քցեմ։ Վախենում էի, թե ժամանակս, փողս կորչի, գիրքս էլ մեկ տեղ թոզումը վեր ընկած մնա, փթի։ Բարեկամ մարդիկ, որ վախտ-վախտ տեսան, խորհուրդ տվին ինձ, թե շատ լավ կըլի, որ տպիլ տամ»[1]. Աղաֆոն Սմբատյանը եղել է այդ բարեկամ մարդկանցից մեկը։ Անշուշտ հետագա ուսումնասիրության նյութ կարող են դառնալ Աղաֆոն Սմբատյանի կյանքն ու գործունեությունը, սակայն սովետական աբովյանագիտությանը հետաքրքրող և Աբովյանին առնչվող հիմնական խնդիրը, մեր կարծիքով, լուծված է։ Պարզված է, որ Աղաֆոն Սմբատյանը գրական տիպ չէ, ոչ էլ նա «Սմբատովն» է։ Պարզված է նաև, որ նա եղել է Աբովյանի ընկերը և սիրելի բարեկամը։

Անհրաժե՞շտ էր արդյոք ճշտել Աղաֆոն Սմբատյանի անձնավորության հարցը։ Այո՛, խիստ անհրաժեշտ էր։

Մեծ լուսավորիչը գործում էր մի շրջանում, երբ ժողովուրդը տակավին խարխափում էր խավարի մեջ, իսկ ինքը — Աբովյանն իր լուսավորական գրական գործունեության համար հալածվում էր։ Տակավին թույլ էր Աբովյանի հասարակական հենարանը, նա չուներ ուժեղ զինակիցներ։ Սակայն միանգամայն սխալ է Աբովյանին միայնակ, ժամանակից շուտ ծնված համարելը։ Աբովյանին խրախուսող, քաջալերող մարդկանց գոյությունը կասկածի տակ առնելը, դրանց գրական կերպարներ և ոչ իրականության մեջ եղած համարելը հենց նշանակում է հիմք տալ Աբովյանին ժամանակից շուտ ծնված, իսկ նրա գաղափարները ներմուծված, հայ իրականության մեջ հող չունեցող և անկենսունակ համարելու։ Գործերից մեկում, խոսելով պատմության մեջ մեծ դեր խաղացած անհատների մասին, Աբովյանը գրում է. «Բայց ո՛չ այնքան նոքա, որքան ժամանակն և հանգամանքն արարին զնոսա մեծ։ Չէին նոքա ծնեալ յայնպիսի ժամանակի, հաւատա՛ ինձ, և ոչ կարէին ունել զայնպիսի ասպարէզ գործոյ, զորս լուեալ մեր, ի զարմանս կրթիմք։ Բերմունք աշխարհի իբրև անտառ ինչ հետզհետէ փոփոխեալ յանկարծ յառաջ ածեն մերձ փոքրիկ թփոյ զայնպիսի ահագին կաղնի կամ սոսնի (սոսի), զորս տեսեալ՝ հիանամք։ Բայց այս բաղդաւորութիւն կաղնւոյն էր, զի բուսաւ յայնպիսի արգաւանդահող տեղւոջ, և ո՛չ կաղնին ինքնին այնպէս զօրացաւ, որ եթէ բուսեալ լինէր ի մէջ ապառաժից կամ անբերրի վայրի, լինէր վտիտ ու նուազ։ Զնոյն նմանութիւն ունի և սեռն մարդկային»[2]։

Հիանալի է ասված. «ժամանակն և հանգամանքն» հասունացել էին Աբովյանի պես գործչի հանդես գալու համար։ Այս ասելով, իհարկե, չենք ուզում թեթև համարել այն պայմանները, որոնց մեջ գործեց մեծ լուսավորիչը։ Դժվար էր նրա գործը, բայց նա ժամանակին էր ծնվել։ Մարդկությունն իր

1 Երկերի լիակատար ժողովածու, հատոր II, էջ 189։
2 «Դիվան Խ. Աբովյանի», հատոր II, էջ 63։

առջև դնում է լուծելի խնդիրներ։ Պարսկական տիրապետության զնդանից ազատված և Ռուսաստանին միացած հայ ժողովուրդը, փրկվելով ֆիզիկական բնաջնջման վտանգից, հաղորդակից էր դառնում ռուսական հարուստ կուլտուրային և գրականությանը, ուստ հասարակական մտքի նվաճումներին, զգում էր մյուս ժողովուրդների կուլտուրական առաջընթացից ետ չմնալու անհրաժեշտությունը։ Աբովյանն առաջինն էր, որ ամենայն խորությամբ ըմբռնեց կյանքի առաջադրած խնդիրները և դրոշակ բարձրացրեց ու մաքառեց այդ խնդիրների իրականացման համար։ Նա ընկավ այդ կռվում, նախապատրաստելով իր հետնորդների գործը։ Հենց այն, որ նրա գործը ունեցավ արժանավոր հետնորդներ, նրա առաջադրած խնդիրները դարձան պայքարի, ոգորումների օբյեկտներ, ցույց է տալիս, որ Աբովյանը ժամանակին էր ծնվել, նրա գաղափարները կենսունակ էին։

Ճիշտ է, իր մղած կռվում Աբովյանը չուներ նշանավոր զինակիցներ, բայց համակրողներ, իր գործը գնահատողներ, քաջալերողներ արդեն կային։ Դրանք էին, որ սիրով էին շրջապատել նրան, խորհուրդ էին տալիս տպագրության տալ աշխարհաբար երկերը, չվախենալ դժվարություններից։ Դրանցից մեկն է եղել, ահա, ինչպես նշեցինք, Աբովյանի «մունջ լեզուն բացող» դոկտոր Աղաֆոն Սմբատյանը։